Սփյուռքի ներգրավման լավագույն փորձն աշխարհում՝ **Հայաստանի քաղաք դասերը**

IOM
UN MIGRATION

Սույն ուսումնասիրության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետը: Ուսումնասիրությունում օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից ցանկացած երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի, կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ որևէ տեսակետի արտահայտում:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ մարդակենտրոն ու կանոնակարգված միգրացիան ծառայում է ի նպաստ միգրանտներին և հասարակությանը: ՄՄԿ-ի որպես միջազգային կազմակերպության, փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիոն խնդիրների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվության արժևորմանն ու բարեկեցության ապահովմանը:

Ուսումնասիրությունն իրականացվել է ՄՄԿ–ի Զարգացման հիմադրամի շնորհիվ ,Հայաստանում զարգացման խթանումը սփյուռքի ներգրավման միջոցովե ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՄՄԿ Զարգացման հիմնադրամի տեսակետը:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՄԿ Հայաստանի առաքելություն
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
ՄԱԿ-ի գրասենյակ, Պետրոս Ադամյան 14 փողոց
Հեռախոս՝ +374 10 58 56 92
Ֆաքս՝ +374 10 54 33 65
էլ. հասցե՝ IOMArmenia@iom.int
Կայք՝ www.iom.int/countries/Armenia

Ուսումնասիրությունը հրատարակվում է առանց ՄՄԿ պաշտոնական խմբագրման:
Ուսումնասիրությունը հրատարակվում է առանց ՄՄԿ Հրատարակության բաժնի թարգմանության:
Ուսումնասիրությունը թարգմանվել է անգլերեն լեզվից:

Հեղինակ՝ © Լուսիա Սավչիկ
Ձևավորումը՝ © Արամ Ուռուտյանի

Հղումների համար՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) 2021:
Սփյուռքի ներգրավվման լավագույն փորձն աշխարհում՝ Հայաստանի քաղաք դասերը: ՄՄԿ Հայաստան:

ISBN 978-92-9068-948-5 (PDF)

© ՄՄԿ 2021

Որոշ հեղինակային իրավունքներ պաշտպանված են: Ուսումնասիրության արտոնագիր՝
https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode (CC BY-NC-ND 3.0 IGO):*

Այլ մանրամասների համար տես՝ հեղինակային իրավունքը և օգտագործման պայմանները:
https://publications.iom.int/terms-and-conditions

Սույն հրատարակումը չի կարող օգտագործվել, պահվել և տարածվել կոմերցիոն նպատակներով, այլ կարող է օգտագործվել զուտ կրթական նպատակներով, ինչպես, օրինակ, դասագրքերում ներառելը:

Թույլտվություն՝ Կոմերցիոն կամ արտոնագրի հետ կապված այլ հարցերով դիմեք publications@iom.int.

* https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode

PUB2021/035/R

Սփյուռքի ներգրավման լավագույն փորձն աշխարհում՝ **Հայաստանի քաղաք դասերը**

Մարտ 2020թ.

IOM UN MIGRATION

IOM DEVELOPMENT FUND
DEVELOPING CAPACITIES IN MIGRATION MANAGEMENT

Բովանդակություն

Ներածություն v

Նախաբան vi

Հայկական համատեքստ 1

Մտադրությունների առաջացում՝ փոխշահավետ հարաբերություններ 2

Սփյուռքի միջոցով պետական նպատակների հասնելու միջոցները 4

Առանձին ուսումնական փորձեր 8

Հաջող ծրագրերի ընդհանուր տարրերը 15

Եզրակացություն 17

Աղբյուրներ 18

Ներածություն

Ամբողջ աշխարհում կառավարությունները շարունակում են դիտարկել սփյուռքը ոչ որպես «կորսված տաղանդ», այլ առավելապես որպես ձևավորված ակտիվ: Այս ամփոփագրում ուսումնասիրվում է նոր ոլորտների ձևավորմանը նպաստող հաջողությունները, արտակարգ իրավիճակներում տրամադրվող աջակցությունը, գիտական ոլորտի գործընկերությունները և այլ փորձեր՝ յուրաքանչյուրից դուրս բերելով լավագույն գործելակերպն ու հաջողության նախադրյալները:

Ամփոփագիրը նախևառաջ կներկայացնի խնդրի նախապատմությունը և այնուհետև կանդրադառնա աշխարհի տարբեր երկրներում կիրառվող քաղաքականություններին ու մոտեցումներին և իշխանություններին կներկայացնի կոնկրետ նպատակներ սահմանելու պահանջ, որոնցում պետք է արտացոլվեն հիմնական ակնկալիքները սփյուռքից, հաշվի առնվեն ու գնահատվեն սփյուռքի կարիքներն ու հանձնառությունները և առաջարկված նախաձեռնության արդյունավետությունը: Բացի այդ, կներկայացվեն համակողմանի գրականությամբ ամրագրված մոտեցումներ և սփյուռքի համաշխարհային ներգրավման փորձը, ինչպես նաև այն փոփոխությունները, որոնք կարող են կիրառվել այդ մոտեցումներում: Ելնելով լայնածավալ գլոբալ վերլուծությունից՝ կներկայացվի այլ երկրների փորձը, որը կարող է օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում սփյուռքի հետ համագործակցության ռազմավարության մշակման գործում:

Նախաբան

Սփյուռքը թիրախավորող զարգացման քաղաքականությունների քննարկումներում գերակայում են հետևյալ երկու հիմնական հայեցակերպերը. տաղանդների ու գիտելիքի գլոբալիզացմամբ ձևավորվող հնարավորությունները և անցումը դեպի այն գաղափարախոսություն, որ սփյուռքը միայն զարգացող երկրների իրողությունը չէ:

Սփյուռքի ներգրավման վաղ ռազմավարությունները միտված էին միգրանտներին տուն վերադարձնելու գործողություններին՝ վստահ լինելով, որ ֆիզիկական վերադարձը մարդկային կապիտալի վերականգման միակ ճանապարհն է: Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված TOKTEN և MIDA առաջին լայնածավալ ծրագրերը ուղղված են եղել կարճաժամկետ, ժամանակավոր ու վիրտուալ վերադարձն ապահովելուն:[1] Շարունակաբար, քաղաքականություն մշակողները ու գիտնականները ուշադրությունն ուղղում են դեպի սփյուռքի տարբեր ինքնությունների ընկալում, «ուղեղների արտահոսքի» և «ուղեղների շրջանառության» գաղափարների վերաիմաստավորում՝ փոխշահավետ հարաբերությունների համակողմանի ճանաչմամբ: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, օրինակ, 1990թ-ին անցում կատարեց «վերադարձիր և ծառայիր» մոդելից դեպի «ծառայիր» մոդելը՝ ֆիզիկական ներկայությունը այլևս չդիտարկելով որպես երկրին աջակցելու խոչընդոտ (Բիաո, 2005): Մեքսիկան, Մարոկկոն և Ֆիլիպինները նույնպես դիտարկում են օտարերկրյա մշտական ու ժամանակավոր աշխատուժը որպես տնտեսապես արժեքավոր (Ռագացի 2014, էջ 76):

Սփյուռքի հետ համագործակցության քաղաքականությունները տարբերվում են երկրից երկիր, քանի որ յուրաքանչյուր երկիր իր ակնկալիքներն ունի օտար երկրներում բնակվող հայրենակիցներից: Որոշ պետություններ, սեփական աշխատաշուկաների բեռնվածությունը թուլացնելու նպատակով, իրենց քաղաքացիների համար կարող են աշխատանքի հնարավորություններ ստեղծել արտասահմանում (օր.՝ Ֆիլիպինները), կան պետություններ, որոնք խթանում են ներդրումները և ամրապնդում բիզնես կապերը (Հնդկաստան), այլք ապահովում են օտար երկրներում ձեռք բերված գիտելիքի ու հմտությունների շրջանառությունը: Ամբողջ աշխարհում սփյուռքի մոբիլիզացման ծրագրերը բարեգործական, միակողմանի նախաձեռնություններից անցում են կատարել դեպի հիմքում փոխշահավետ գործընկերություններ (Լարներ 2007, էջ 335): Հետևաբար, ներգրավումը հնարավորության դեպքում պետք է դիտվի փոխգործակցության և ներառական գործընկերությունների լույսի ներքո:

[1] TOKTEN՝ Գիտելիքի փոխանցում օտարերկրյա փորձագետների միջոցով (նախաձեռնել է ՄԱԶԾ-ն, այժմ իրականացվում է ՄԱԿԿ (UNV) համակարգմամբ); MIDA՝ Միգրացիան հանուն զարգացման Աֆրիկայում (ՄՄԿ), RQN՝ Որակավորված մասնագետների վերադարձ, ՄՄԿ:

Հայկական համատեքստ

Սփյուռքի տարածման լայն կորը բարդացնում է կարգացման այն մոդելների իրականացումը, որոնք կենտրոնանում են բնակչության այն խմբերի վրա, որոնց կարելի է նկարագրել որպես օտարերկրացի փորձագետներ՝ ծագման երկրում ծնվածները և ոչ նրանց անմիջական հետևորդները: Այդ նպատակից ելնելով՝ սփյուռքը պետք է ընկալել, որպես մարդիկ, որ իրական ու պոտենցիալ կապեր ունեն Հայաստանի Հանրապետության հետ: Շոշափելի կապերը կարող են լինել տնտեսական, քաղաքացիության վրա հիմնված, գույքով կամ ընտանեկան կապերով ամրապնդված կամ՝ ոչ շոշափելի, ինչպես օրինակ մշակութային կամ էթնիկ:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի քաղաքականության տարբերակների բազմությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայկական սփյուռքի սփռվածությունը և միգրանտների երկրորդ, երրորդ ու չորրորդ սերունդների առկայությունը: Թեև կարող է թվալ, որ այս խմբերը տնտեսապես ավելի կայուն են, ունեն բարձրագույն կրթություն և նվիրաբերելու ավելի մեծ ռեսուրսներ, վերջերս գաղթածները, ներառյալ մոտ երկրներում գտնվողները չպետք է անտեսվեն որպես կարգացման աջակիցներ:

ԱՄՆ-ում սփյուռքի տարբեր ներկայացուցիչների հարցապրույցների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ԱՄՆ-ի հայկական սփյուռքը ավելի քիչ է հետաքրքրված դեպի նախնիների երկիր ուղիղ ֆինանսական ներդրումներով: Ի տարբերություն Կուբայի, Իրանի Իսլամական Հանրապետության և Պաղեստինի տարածքներից միգրանտների, հարցապրույցին մասնակցած հայերը ներկայացնում էին «հին» սփյուռքը, ով ավելի սակավ կապեր ու առնչություններ ունի ժամանակակից Հայաստանի հետ (Ջիլեսպի, 1999): Ապացույցները փաստում են, որ նոր գաղթածներն ավելի հակված են ռիսկի դիմել և ավելի մեծ ներգրավվածությամբ աջակցել հայրենիքին: Դա չի նշանակում, որ հին սփյուռքին չարժէ ներգրավել ռազմավարական միջոցառումներում, պարզապես անհրաժեշտ է ակնկալել, որ յուրաքանչյուր առանձին (հին ու նոր) խմբի հիմնավորումներն ու ակնկալիքները կարող են տարբեր լինել:

Մտադրությունների առաջացում՝ փոխշահավետ հարաբերություններ

Անկախ իրականացվող լայնածավալ ռազմավարությունից, թիրախավորված քաղաքականությունից, թե հատուկ ծրագրից, պետությունները պետք է առաջին հերթին պատկերացնեն, թե սփյուռքի ներգրավման ինչ մտադրություններ ունեն և, ինչն ավելի կարևոր է՝ ինչ կարող են առաջարկել դրա դիմաց: Քանի որ, Հայաստանի կառավարությունը ցանկանում է ամրապնդել համահայկական ինքնությունը, կազմակերպել օտարերկրյա պետություններում բնակվող հայրենակիցների վերադարձը և օգտվել նրանց զարգացման ներուժից, այն պետք է հաշվի առնի դրա դիմաց առաջարկվող խթաններն ու աջակցությունը: Ստորև ներկայացվում են ռազմավարության ձևակերպման համար որոշ ընդհանուր հիմնավորումներ և դրանց մոդելները:

Արտասահմանում ապրող բնակչության ներուժից «օգտվելու» մոտեցումները բազմաթիվ են. ֆինանսական աջակցություն պասիվ տնտեսությունը վերականգնելու համար, նվիրատվությունների ներգրավում և բարեգործության խթանում, արտասահմանում ձեռք բերված գիտելիքի ու հմտությունների օգտագործում, զբոսաշրջության խթանում և երկրի «բրենդի» ձևավորում, մասնավոր ոլորտում կապերի զարգացում, ոչ ֆորմալ դիվանագիտության խթանում և կոալիցիաների կառուցում: Քանի դեռ այս օրինակները հարուստ հնարավորություններ են ստեղծում պետության նպատակները հետապնդելու համար, սփյուռքի ներկայացուցիչներին ներկայացվում են նշանակալի անձնական, մասնագիտական ու տնտեսական առավելություններ:

Մեկ այլ ճանապարհով պետությունները կարող են «հովանու տակ վերցնել» կամ հրավիրել նրանց, ովքեր ամուր կապեր չեն պահպանել հայրենիքի հետ: Համայնքաստեղծ այս մոտեցումները շարժվում են դեպի «կորածների» ու չհետաքրքրվածների ներգրավում: Դա սովորաբար արվում է մշակութային նախաձեռնություններով (օր.՝ համայնքային կենտրոններ, միջոցառումներ, փառատոներ), որոնք կարող են լինել գաղափարախոսական կամ կրոնական բնույթի՝ սփյուռքի ներկայացուցիչների մոտ արթնացնելով հայրենասիրական զգացմունքներ: Դրանց նպատակն է ամրապնդել և հզորացնել ընդհանուր ինքնությունը և մեկ համայնքի զգացողությունը: Ավելի կոնկրետ, նմանատիպ նախաձեռնությունները կարող են ընդգրկել ինքնության քարտեր կամ հատուկ կարգավիճակ սփյուռքի ներկայացուցիչների համար (ինչպես օրինակ՝ OCI և OFW Ֆիլիպիններում)՝ արտոնությունների տրամադրմամբ ընտրությունների ժամանակ, ներկայացվածությամբ, երկքաղաքացիությամբ կամ նույնիսկ սոցիալական աջակցությամբ:

Ինչպես «հովանու տակ վերցնելու», այնպես էլ «օգտվելու» տարբերակներն ունեն իրենց դրական կողմերը, և բազմաթիվ պետություններ կիրառում են դրանք համադրությամբ:[2]

[2] Երրորդ կատեգորիան հաճախ ներկայացվում է սփյուռքի վերաբերյալ գրականությամբ, մասամբ «կառավարականության» հասկացությամբ, որը ներկայացվել է Ալեքսանդրա Դիլանոյի և Ալան Գամլենի կողմից: Սակայն, այն մեծ մասամբ տեսական է և դուրս է տվյալ նյութի շրջանակից:

Յուրաքանչյուրին, թեև պետք է զգուշությամբ մոտենալ: Այն ռազմավարությունները, որոնք նախատեսում են օգտվել ներուժից, պետք է խուսափեն միակողմանի, բացարձակ բարեգործական հարաբերություններից, փոխարենը փնտրելով փոխշահավետ հնարավորություններ սփյուռքի և պետության համար: Այն ռազմավարությունները, որոնք ընդգրկում են արտասահմանում ծնվածներին, երկրորդ ու երրորդ սերունդներին ունեն (որոշ դեպքերում) թյուրըմբռնված լինելու վտանգ: Վերջինս տեղի ունենում այն պատճառով, որ «հովանու տակ վերցնելու» ռազմավարություններն ընդլայնում են ֆիզիկական ու վիրտուալ սահմանները՝ տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձանց առաջարկելով և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ:

Սփյուռքի միջոցով պետական նպատակների հասնելու միջոցները

Ինչպես ներկայացվում է աղյուսակ 1-ում, սփյուռքի հետ իրականացվող նախաձեռնությունները կարող են նպաստել քաղաքականությամբ սահմանված մի շարք նպատակների իրականացմանը, որոնք բխում են երկրի կարիքներից ու ռազմավարություններից: Այն կարող է ընդգրկել ֆինանսական կապիտալ, մարդկային կապիտալ, սոցիալական կապիտալ և այլ ներդրումներ: Այս խնդիրներն ու դրանց իրականացման օրինակներն ավելի մանրամասնորեն ներկայացված են ստորև:

Վանդակ 1. Քաղաքականության նպատակներ

Քաղաքականության ընդհանուր նպատակներ

- սփյուռքի **տաղանդների ու հմտությունների** (մարդկային կապիտալի)ուսումնասիրություն,
- կարճաժամկետ թիրախավորված կապիտալ ներդրումներ ներգրավում,
- **երկարաժամկետ ներդրումների խթանում** գործընկերությունների միջոցով,
- **կարողությունների վարգացում** (ինստիտուցիոնալ և արդյունաբերական),
- համայնքի ինքնության ձևավորում,
- ոչ ֆորմալ **դիվանագիտություն**,
- **վբոսաշրջության և այլ** «նոստալգիայի» **ոլորտների վարգացում**

(Տես. Aguinas and Newland, 2012; Naujoks, 2013; Delano and Gamlen, 2014)

Սփյուռքի ներգրավման քաղաքականության և պետության վերաբերյալ լայն գրականության, համաշխարհային հետազոտությունների ու փորձագիտական կարծիքների դիտարկումը հուշում է, որ պետք է հաշվի առնել կառավարության համար հասանելի մի շարք ուղեցույցներ ու ձեռնարկներ, որ վերաբերում են սփյուռքի ներգրավմանը: Մասնավորապես, այնպիսի կազմակերպություններ, ինչպես ՄՄԿ-ն, Միգրացիոն քաղաքականության ինստիտուտը և այլոք մշակում են ուղեցույցներ ու «ճանապարհային քարտեզներ»՝ միտված սփյուռքի ներգրավման ռազմավարությունների մշակմանն ու համապատասխանեցմանը: Այս փաստաթուղթը պարունակում է այդ ուղեցույցներում ներկայացված առավել ակտուալ գաղափարները:

Կառավարության կողմից իրականացվող նախաձեռնությունների լավագույն փորձը պետք է հաշվի առնել ավելի լայն համատեքստում, որը կընդգրկի գիտահետազոտական աշխատանքն ու սփյուռքի կարողությունների քարտեզագրումը, սփյուռքի կողմից վստահության ամրապնդումն ու կարողությունների զարգացումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի միջև պատասխանատվության բաժանումը: Քաղաքականության մշակման ու ծրագրերի ձևավորման փուլում Հայաստանը պետք է հստակ ամրագրի սփյուռքի ներգրավման առաջնահերթությունները ու նպատակները: Այդ նպատակները պետք է ընկած լինեն սփյուռքի հետ համագործակցության քաղաքականության հիմքում: Ստորև ներկայացված կատեգորիաների մեծ մասը խաչվում են միմյանց և չպետք է դիտվեն որպես քաղաքականությունների մշակման սկզբունքների սպառիչ ցանկ:

Աղյուսակ 1 Սփյուռքի հետ համագործակցության նախաձեռնությունների տիպաբանություն, օրինակներ և բնութագրեր

Նպատակ	Ներգրավում	Հիմնական բնութագրեր	Հաջողված փորձ
Գիտելիքի ու հմտությունների փոխանցում	▪ Մասնագիտական ցանցեր ▪ Հմտություններին համապատասխանող տվյալների բաներ ▪ Ուղղորդում ▪ Վիրտուալ վերադարձ կրթության կամ վերապատրաստման նպատակով (հեռակա ուսուցում) ▪ *Առանց վարձատրության* կարողությունների բարելավման անհատական նախաձեռնությունների իրականացում ▪ Գործընկերություններ մասնավոր ոլորտի հետ հայրենադարձության և վերապատրաստման ուղղությամբ ▪ Աջակցություն համալսարաններին	▪ Ընդգրկում է մասնագետների ներգրավման մրցակցային հնարավորություններ ▪ Սփյուռքում առկա հմտությունների հատկորոշում ▪ Ծագման երկրում գիտելիքի ու հմտությունների բացերի լրացում ▪ Մարդկային կապիտալի երկարաժամկետ վարգացման ներդրումներ ▪ Ցանցերն ու ծրագրերը կարող են լինել ընդհանուր, ոլորտային, տեղայնացված կամ առանձին կառույցների համար ▪ Կառավարությունը կարող է գործել որպես առաջնորդ կամ «իրար կապող»: ▪ Մեծ մասամբ սփյուռքի նախաձեռնությամբ Թայվան (ROC)	Չինաստանի Թայվան նահանգ Կորեայի Հանրապետություն Շոտլանդիա Նոր Զելանդիա Կոլումբիա Չինաստան Հարավային Աֆրիկա Հնդկաստան
Ներդրումներ	▪ Ուղիղ ներդրումներ առևտրային ձեռնարկություններում ▪ Փոխանցումներ ▪ Կապեր սփյուռքի հետ ▪ ՕՈՒՆ ▪ Նոր ոլորտների բացում ▪ Բիզնեսի ընդլայնման հնարավորություններ	▪ Կարճաժամկետ կապիտալ ներարկումներ և երկարաժամկետ ներդրումներ ▪ Ռիսկի մեղմում լեզվի, մշակույթի ու կառուցվածքի իմացության շնորհիվ: ▪ Սփյուռքի գիտելիքի ու կարողությունների օգտագործում հնարավորությունների ու ձեռներեցության ընդլայնման նպատակով	Սենեգալ Չինաստանի Թայվան նահանգ Կորեայի Հանրապետություն Մեքսիկա Իսրաել
Բարեգործություն	▪ Ազգային ասոցիացիաներ ▪ Հիմնադրամներ ▪ Առցանց հարթակներ (օր.՝ Կիվա) ▪ Կրոնական խմբեր	▪ Կարող է արդյունավետ «մեկնակետ» լինել ավելի բովանդակալից հարաբերությունների վարգացման համար (Կինգսլի Այկինս) ▪ Վերաբերում է կոնկրետ ոլորտներին կամ աշխարհագրական վայրերին ▪ Հաճախ կիրառվում է ճգնաժամների ընթացքում կամ հետճգնաժամային ժամանակահատվածներում՝ միջոցների հրատապ հայթայթման համար ▪ Կարող է ավելի արդյունավետ ու ճկուն լինել, քան ոչ սփյուռքից արվող բարեգործությունը ▪ Կառավարությունը կարող է օգնել գտնել ծրագրեր, նվավեցնել իրականացման խոչընդոտները ▪ Տարբեր առաջնահերթություններ սփյուռքում և ծագման երկրում ▪ Պահանջում է կոնկրետ, թիրախավորված նպատակներ հաջողության հասնելու համար	Մեքսիկա Սենեգալ Ճամայկա Հոնդուրաս Իռլանդիա Ֆիլիպիններ Հնդկաստան

Նպատակ	Ներգրավում	Հիմնական բնութագրեր	Հաջողված փորձ
Համայնքային ինքնություն	▪ Մշակութային կենտրոններ ▪ Համալսարանական խմբեր ու ասոցիացիաներ ▪ Ֆոյսբուքյան կամ Ուոթսափի ոչ ֆորմալ ցանցեր ▪ Փառատոններ, տոնակատարություններ ու համաժողովներ	▪ Ապահովել մարդկանց ներգրավման համար հարթակներ ▪ Կարող է ապահովվել դեսպանատների/հյուպատոսությունների կամ սփյուռքի կողմից ▪ Առաջարկել աջակցություն սփյուռքի այլ ներկայացուցիչներին և նպաստել համայնքի բարեկեցությանը ▪ Պահպանել մշակութային կապերը	Բանգլադեշ Իռլանդիա Ֆրանսիա Միացյալ Թագավորություն
Զբոսաշրջություն և ժառանգություն, նոստալգիայի ոլորտի բիզնեսներ	▪ Հայրենադարձ զբոսաշրջություն ▪ Ընկերների ու ընտանիքի անդամների այցելություն ▪ Նոստալգիկ պարագաների առևտուր ▪ Բարձր խոհանոց	▪ Զգացմունքահեն ▪ Նպաստում է հայրենադարձությանն ու վերադարձին արմատներին, դրա փոխարեն խթանելով արդյունաբերությունը և առևտուրը ▪ Տուն վերադարձը ենթադրում է կամավորությունև կենցաղ, որպեսզի ավելի լավ հասկանան կենսակերպը ▪ Այցելություններ սփյուռքից՝ ծագման երկրում ընտանիքին ու ընկերներին տեսնելու նպատակով ▪ Էժան ճամփորդության (երկրին ծանոթանալու) հնարավորություն սփյուռքի անդամների ընկերների համար ▪ Ծախսերը հաճախ կենտրոնանում են համայնքներում և տեղական տնտեսություններում, տուրիստական գործակալությունների փոխարեն	Հնդկաստան Իռլանդիա Լեհաստան Իսրայել Հայիթի

Աղբյուր. հեղինակի աշխատություններ, Կուվնեցովի, Նաուջոկսի, Դելանոյի ու Գամլենի, Ակվինասի և Նյուլանդի աշխատություններից քաղվածքներով:

Առանձին ուսումնական փորձեր

Նախորդ բաժնում ներկայացված տարբերակների ցանկը մշակելիս և սփյուռքի ուժեղ կողմերը քննարկելիս հայկական համատեքստում հարմարեցման հարցում հետագա քննարկման համար ընտրվել են հետևյալ դեպքերը: Նախ, կդիտարկենք գիտելիքի և հմտությունների փոխանցումը՝ ինչպես ցույց է տրված հնդկական սփյուռքի կողմից Սիլիկոնյան հովտում: Երկրորդ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ ինչպես ցույց է տրված թայվանական չինական սփյուռքի կողմից, և, վերջապես, հայրենի քաղաքի միավորումների հարմարեցումը, որը վկայակոչված է Մեքսիկայի 3x1 ծրագրով:

Գիտելիքի և հմտությունների փոխանցում	
Հաջողության հասնելու պայմանները և լավագույն գործելակերպերը. երկկողմ փոխշահավետ հնարավորություններ երկու կողմերի համար, երկարաժամկետ քոուչինգ և աջակցություն ապահովելու պատրաստակամություն, հարմարեցվող և ճկուն կարգավորիչ միջավայր, ակտիվ բիզնես աջակցություն և ներդրում սփյուռքից.	Քոուչինգի և մենթորության նախաձեռնություն, բարենպաստ պետական քաղաքականություն, հայտնաբերվում են տնային կրթության և մասնագիտական վերապատրաստման համակարգերում առկա բացերը, և շտկվում են տնային համակարգերում առկա թերությունները.

Վերաբերելիությունը Հայաստանին. Հնդկաստանը հայկական համատեքստում բազմաթիվ պատճառներով ուսումնասիրության համար պարտադիր դեպք է հանդիսանում: Ինչպես Հայաստանը, այն ունի մեծ, սփռված սփյուռք, որը կարող է ձևավորված, կրթված և հարաբերականորեն ազդեցիկ լինել արդյունաբերական երկրներում: Ինչպես սփյուռքահայերը, հնդկական ծագում ունեցող անձինք (ՀԾՈՒԱ) ամուր կապեր ունեն տեխնիկայի և ինժեներության ոլորտների հետ առնչվող նորարարությունների այնպիսի հանրահայտ հաջող կենտրոնացումներում, ինչպիսին է Սիլիկոնյան հովիտը: Հնդկաստանը նաև ունի բազմազան միգրացիոն պատմություն՝ մի քանի դարերի ընթացքում բազմաթիվ ալիքներով, որը հանգեցրել է նրան, որ բազմաթիվ սերունդներ չգիտեն մշակույթը, լեզուն կամ կառույցները և կարող են քիչ կապվածություն կամ իրական կապ ունենալ երկրի հետ: Փաստորեն, բազմաթիվ դեպքերի ուսումնասիրություններում հնդկական սփյուռքի գիտելիքի փոխանցման հաջողությունները համեմատվում են հայկական սփյուռքի հաջողությունների հետ (*տես* Կուլնեցով, 2006թ., էջ 16):

Համատեքստը. 70-ականների և 80-ականների ընթացքում Հնդկաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրերի կտրուկ աճը լավ փաստաթղթավորված դեպքի ուսումնասիրություն է, և բազմաթիվ պետություններ փորձում են դրա հաջողությունը կրկնօրինակել:

Չսահմանափակվելով SS ոլորտով, հնդկական սփյուռքը նաև վգալի ջանքեր է գործադրել իր հայրենիքի բժշկական և ինժեներական բնագավառները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար: Առաջին սերնդի շատ հնդիկներ ԱՄՆ-ում ուսումնական հաստատություններ են հաճախում ասպիրանտական կրթություն ստանալու համար, և մեծ թվով անձինք ավարտելուց հետո մնում էին այնտեղ շարունակելու համար իրենց կարիերան՝ բարձրանալով համապատասխան մասնագիտական աստիճաններով: Սա օգնել է ձևավորել կրթության բարձր աստիճան ունեցող սփյուռք, որն ամուր կապեր ունի իր ծագման երկրի հետ: Այնուամենայնիվ, առկա է էական փոխադարձ հարստացում հաստատված գաղթական համայնքների և նոր արտագաղթողների միջև.

> 1980-ականների սկզբներին բավմաթիվ փոքր հնդկական ընկերություններ եկան Սիլիկոնյան հովիտ՝ փնտրելով ցածր մակարդակի պայմանագրային աշխատանք ծրագրերի մշակման բնագավառում: Հնդկական ծագում ունեցող բավմաթիվ գործադիր պաշտոնյաներ պատրաստակամ էին օգնելու, սակայն մեծ մասը գտնում էր, որ հնդկական ընկերությունների աշխատանքը բավարար չէր, իսկ նրանց մշակման գործիքները և համակարգիչները ոչ պատշաճ էին... Հնդկական ընկերությունները չէին կարող բավարարել, կամ երբեմն՝ նույնիսկ հասկանալ ԱՄՆ որակի և ժամանակային չափանիշները (Աբիշեկ և այլք, 2006թ., էջ 80):

Այս փուլում սփյուռքի պաշտոնյաները և SS մասնագետներն աշխատում էին նորեկների հետ ըստ պահանջի հիմունքներով՝ կատարողականի և որակի չափանիշների անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ: Հնդկական սփյուռքը վերելք ապրեց մինչև SS լավագույն ընկերություններ և սկսեց զբաղվել իր ընկերությունների լոբբինգով, որպեսզի դիտարկվեր գործունեությունը և հետապոտությունն ու մշակումը Հնդկաստան տեղափոխելու տարբերակը:

Թեև Հնդկաստանի ծրագրերի և SS տնտեսության հաջորդած մեծածավալ աճը նաև ներառում էր վգալի օգնություն «առաջին տեղափոխված» ներդրողներից, վաղ փուլում փոխանցված գիտելիքի և հմտությունների միջոցով ապահովված կարողությունների վարգացումը մեծ դերակատարում ունեցավ արդյունաբերությունը համաշխարհային շուկայում վերջինիս զբաղեցրած դիրքին հասցնելու նպատակով քոուչինգի իրականացման հարցում: Մի շարք իրավիճակային գործոններ արագացրեցին վերելքը (անշուշտ, շատ նմանատիպ դեպքերի ուսումնասիրություններում հանդիպող գործոնների նման), այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ձեռնարկատիրությամբ զբաղվելու բարձր գինը, և Հնդկաստանի տնտեսության և աշխատուժի գրավչության բարելավումը (Աբիշեկ և այլք,):

Հաջորդող տարիներին տեսանելի եղան սփյուռքի լայնածավալ քոուչինգի և մենթորության անուղղակի ազդեցությունը Հնդկաստանում սկիզբ առնող SS ոլորտի վրա: Լավագույն ընկերությունները (ինչպես օրինակ՝ GE-ն, IBM-ը) մասնաճյուղեր բացեցին Հնդկաստանում, սկսեց ներդրումների հոսք, և սփյուռքի շատ ներկայացուցիչներ հենց իրենք տեղափոխվեցին Հնդկաստան՝ իրենց սեփական ընկերությունները և ձեռնարկությունները հիմնելու համար: Ուժեղացան արտասահմանում գտնվող սփյուռքի համայնքների մասնագիտական միավորումները՝ կապը և մենթորության փուլը պահպանելու համար:

Դասերը Հայաստանի համար. Հայաստանի համար Սիլիկոնյան հովտի ստարտափերում և ինժեներական ընկերություններում իր ունեցած նմանատիպ դիրքի մրցակցային առավելությունը, մաթեմատիկայի և գիտության ոլորտի աշխատողների տարածումը և հենց Հայաստանում սկիզբ առնող SS արդյունաբերությունը հաշվի առնելով, սա դեպք է, որն արժե հետագա քննության առնել:

Սփյուռքի կողմից Հնդկաստանում ՏՏ ոլորտում ներդրումներ կատարելու վաղ փորձերը ձախողվեցին կամ դրանցից հրաժարվեցին անբարենպաստ կարգավորիչ պայմանների և տնային աշխատողների թերի կարողությունների պատճառով: Հայաստանը գիտատար արդյունաբերություններից հետ չմնալու համար աշխատուժ ստեղծելու և վերապատրաստելու հարցում նույնպես հանդիպում է արգելքների: Թեև (ինչպես Հնդկաստանում) սփյուռքն օգնել է երկրում ստեղծել կրթական հաստատություններ, արտասահմանում կրթությունը շարունակում է ցանկալի լինել: Հայաստանը պետք է աշխատի սփյուռքի առաջնորդների հետ նրանց բնագավառներում՝ նրանց ոլորտներում վարգացման համար արգելքները հայտնաբերելու հարցում:

Ֆինանսավորում, ձեռնարկատիրություն և ներդրում

Հաջողության հասնելու պայմանները և լավագույն գործելակերպերը. փորձ խիստ հաջողակ ինկուբատոր միջավայրում (ինչպես օրինակ՝ Սիլիկոնյան հովտում) և օտարերկրյա կրթություն, կառավարության կողմից ոլորտի սահմանում, որին հետևում է սփյուռքի գործողությունը, ավատ շուկայի հասանելիություն և հզորություն, սկզբնական ֆինանսավորում. համընկնող նպաստներ, քոուչինգ և մենթորինգ սփյուռքի «առաջին տեղափոխված» անձանցից՝ ծագման երկրի ներդրողներին ոչ միայն խրախուսելու, այլև նոր հնարավորությունների հարցում համոզելու համար, տեղափոխվելու ցանկություն և պատրաստակամություն, աջակցություն տեղափոխման և բիզնեսի վարգացման հարցում, սեփական երկրի կառույցների և կազմակերպությունների որակ և հզորություն.

Վերաբերելիությունը Հայաստանին. Ինչպես Չինաստանի Թայվան նահանգը, Հայաստանն էլ է ունեցել գիտության ոլորտի աշխատողների և տաղանդի մեծածավալ արտահոսք դեպի արտասահման՝ ավելի շահութաբեր մտահղացումների համար: Գիտելիքի և հմտությունների փոխանցման վերոնշյալ օրինակի նման, այս ստեղծված վերնախավը կարող է առանցքային դեր խաղալ իրենց ծագման երկիր (ԾԵ) նոր ֆինանսական կոնցեպտներ և ձեռնարկություններ բերելու հարցում: Քանի որ կառավարությունը փորձում է այս անձանց գրավել, որպեսզի հենց իրենք և իրենց կապիտալը «հայրենադարձվեն» Հայաստան, «բարենպաստ հնարավորությունների շրջանի» Չինաստանի Թայվան նահանգի օրինակը, որն ընդգծել են Սաքսենյանը և Կուվնեցովը, համոզիչ օրինակ են հանդիսանում:

Համատեքստը. Ի տարբերություն շատ այլ սփյուռքի հաջողության պատմությունների, Չինաստանի Թայվան նահանգի օրինակը հաճախ նկարագրվում է որպես առաջինը, որը նախաձեռնվել և սահմանվել է կառավարության կողմից, այլ ոչ թե որպես սփյուռքի առկա գործընկերության վրա հիմնված ձեռնարկություն: Ինչպես հնդկական սփյուռքի դեպքում, Կալիֆորնիայում Չինաստանի թայվանական համայնքը հաջողության է հասել՝ օգտվելով արևմտյան երկրներում ստացած բարձրագույն կրթության և իրենց ոլորտներում հետագա աշխատանքի հնարավորությունների առավելություններից:

Գծապատկեր 1 **Գիտության ոլորտի աշխատողների և վերադարձած անձանց «բարենպաստ հնարավորությունների շրջանը»**



Source: Annalee Saxenian, University of California, Berkeley

> Երբ Չինաստանի Թայվան նահանգը 1980-ականներին որոշեց խթանել վենչուրային կապիտալի արդյունաբերությունը, այն չուներ դա անելու ո՛չ կարողություններ, ո՛չ էլ նախագիծ: Շատերը հակառակվում էին գաղափարին, քանի որ վենչուրային կապիտալ հասկացությունն օտար էր ավանդական թայվանական գործելակերպին... Սիլիկոնյան հովտում գտնվող Չինաստանի Թայվան նահանգի սփյուռքի հետ ինտենսիվ շփումների միջոցով այնպիսի նոր կառույցներ, ինչպիսին է նախնական կապիտալը (նախնական 800 միլիոն ՆԹ դոլար հատկացմամբ, որն այնուհետև լրացվեց ևս 1.6 միլիոն ՆԹ դոլարով), մասնավոր վենչուրային ֆոնդերին ապահովեցին բաժնային կապիտալում համընկնող մասնակցությամբ (Կուվնեցով, 2008թ., էջ 206):

Վենչուրային կապիտալիզմի (ՎԿ) հաջող ներմուծմանը Չինաստանի Թայվան նահանգի նպաստել են բազմաթիվ գործոններ: Նախ, այն հիմնվել է Թայվան նահանգի բարելավվող կարգավորիչ և ձեռնարկատիրական միջավայրից: Սփյուռքը սկսեց իր հայրենի երկրներում ձեռնարկություններ հիմնելու մեջ հասանելի հնարավորություններ տեսնել և նախատրամադրված էր այնտեղ վերադառնալ: Կառավարության կողմից վենչուրային կապիտալի շրջանակներում առանցքային շահագրգիռ անձանց սահմանումը և ներգրավումը հանգեցրեց սփյուռքի կողմից Չինաստանի Թայվան նահանգում վենչուրային ֆոնդերի ստեղծմանը: Այս կրթված արտասահմանցի չինացիներին հրավիրեցին տեղափոխվել Թայվան նահանգ, և հաջող վենչուրներ ստեղծելուն զուգահեռ նրանք օգտագործում էին իրենց ցանցերը՝ ավելի շատ ներդրողների նույնն անել համոզելու համար: Կառույցները և սկզբնական կապիտալը կտրուկ աճեցին՝ նոր ձեռնարկություններին բավարարելու և աջակցելու համար:

Դասերը Հայաստանի համար. Բարենպաստ հնարավորությունների շրջան վերաստեղծելու և «ցուցադրման ազդեցությանը» հետևելու համար կառավարությունը պետք է առանցքային նշանակություն ունեցող ոլորտներում սփյուռքին փոխանցի Հայաստանում կատարված բարեփոխումները և նրանց համար նոր հնարավորությունները: Վերադառնալու քիչ հավանականություն դրսևորող «հին» սփյուռքի վրա կենտրոնանալու փոխարեն վերադառնալու և

ներդրում կատարելու նախաձեռնությունների խթանման համար կարող են ավելի նպատակահարմար լինել մոտ արտասահմանում, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում գտնվողները, քանի որ ավելի հավանական է, որ նրանք խոսեն հայերեն լեզվով, ծանոթ լինեն տեղական համատեքստին և դրսևորեն հայրենիք տեղափոխվելու ավելի մեծ հակվածություն:

Բարեգործությունը և հայրենի քաղաքի միավորումները

Հաջողության հասնելու պայմանները և լավագույն գործելակերպերը. հանրային-մասնավոր գործընկերություն՝ շեշտադրելով սփյուռքի կողմից իրականացվող ծրագրերը, ինչպես սփյուռքի, այնպես էլ պետության լայն ներգրավվածություն, որը երկու կողմերից էլ ռեսուրսներ և ժամանակի ներդրում է պահանջում, տեղական գնումներ նախաձեռնությունների կայունության համար, մասնավոր ոլորտի ներգրավվածություն և հոգածություն համաֆինանսավորման ֆոնդերում, անկախ կատարողների (զգացմունքային ներդրում չունեցող) կողմից վերահսկողություն և խորհրդատվություն՝ նախաձեռնություններն ազգային ռազմավարություններին և զարգացման առաջնահերթություններին համապատասխանեցնելու համար:

Վերաբերելիությունը Հայաստանին. Հաշվի առնելով արտասահմանում բնակվող՝ շրջանառու միգրացիայում ներգրավված հայ բնակչության մեծ թիվը և արտագաղթողների կողմից փոխանցված զգալի գումարները, առանց Մեքսիկայի և Հարավային Ամերիկայի դեպքերի համեմատությունը թերի կլիներ: Թեև դեպի Ռուսաստանի Դաշնություն շրջանառու միգրանտների շրջանակը նեղ է, և դրամական փոխանցումների մեծ մասն ուղղվում է կենցաղային ծախսերին և սպառողական ապրանքներին, հայրենի քաղաքի միավորումները (ՀՔՄ) կարող են ծառայել շատ նպատակների, որոնք լավ հարմարեցված են Հայաստանի կարիքներին, այդ թվում՝ սփյուռքի շրջանում ընդհանուր ինքնություն և համահայկական գործ ստեղծելու ու ուժեղացնելու համար:

Ի հավելումն, ՀՔՄ-ներին վուգահեռ մոտեցում կարող է ցուցաբերվել ավելի հին, ինչպես օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Արևմտյան Եվրոպայի սփյուռքի դեպքում: «Հին» սփյուռքին պատկանող այս խմբերը բարձր հակվածություն են ցուցաբերել դեպի բարեգործական գործունեությունը և հաճախ ներգրավվում են գումար հավաքելուն ուղղված ջանքերում: Թեև հին սփյուռքը կարող է ժամանակակից Հայաստանը որպես «հայրենիք» չընկալել կամ որոշ համայնքների հետ ամուր կապեր չունենալ, սակայն Սփյուռքում գործող հայկական դպրոցները, եկեղեցիները, ՀԿ-ները և հիմնադրամները կարող են «հարմարեցվել» հայրենիքին և հանդես գալ որպես հովանավորներ:

Համատեքստը. Մեքսիկան շարունակում է ապահովել դեպի Ամերիկայի Միացյալ Նահանգներ միգրացիայի կայուն հոսք, որը հաճախ ներգրավվում է ցածր մակարդակի հմտություններ պահանջող աշխատանքում: Դեպի աշխարհի այս մասը դարեր շարունակ տեղի ունեցող միգրացիոն հոսքերը ձևավորել են ամուր միգրանտ համայնքներ և ցանցեր, այդ թվում՝ ՀՔՄ-ներ: ՀՔՄ-ները միգրանտների մասնավոր խմբեր են, որոնք համախմբվում են ընդհանուր ծագման փոքր քաղաքի, քաղաքի կամ շրջանի հիման վրա: Այդպիսի միավորումներ կարելի է հանդիպել նաև կոլումբիական, վենեսուելական, հոնդուրասական, ֆիլիպինյան, պակիստանյան և բազմաթիվ այլ սփյուռքերի շրջանում: Միավորումները ծառայում են բազմաթիվ նպատակների և նկարագրվում են որպես միկրոներկայացուցիչ մարմիններ, որոնք որոշ դեպքերում իրենց հայրենիքում ազդեցության լծակներ ունեն պետական քաղաքականության վրա: ՀՔՄ-ները հաճախ ղեկավարվում են ղեկավար կոմիտեի կամ խորհրդատուների խորհրդի կողմից և գործում են որպես կապ միգրանտ համայնքների և հայրենիքում գտնվող ընկերների և ընտանիքների միջև՝ դյուրացնելով գիտելիքի և ֆինանսական հոսքերը (Օրոսկո և Ռաուլ, 2007թ.):

Մեքսիկայում «*Tres por Uno*» կամ 3x1 ծրագիրը համարվում է դրամական փոխանցումները վարգացման թիրախային նպատակների համար օգտագործելու և միևնույն ժամանակ նրանց ծագման երկրի ընթացիկ հարցերում միգրանտ բնակչության ներգրավվածությունը և հետաքրքրությունը բարձրացնելու օրինակ:

> 3 x 1 ծրագիրը խրախուսում է ՀՔՄ-ների կատարած ներդրումը համայնքային ծրագրերում, որոնց համատեղ անվանում են դրամական փոխանցումներ, առաջարկելով համաֆինանսավորում դաշնային, նահանգային և մունիցիպալ կառավարություններից, ստեղծելով երեքը մեկին համընկնում, որից էլ առաջանում է ծրագրի անվանումը: Ընդհանուր ծրագրերը ներառում են միգրանտների հայրենի քաղաքներում այնպիսի ենթակառուցվածքներ կառուցելը, ինչպիսիք են ճանապարհները, ջուրը, կոյուղին և էլեկտրականությունը, ինչպես նաև կրթական, մշակութային, սպորտային և առողջապահական ծրագրեր (Մալոուն և Դըրդեն, 2018թ., էջ 141):

3 x 1 ծրագրի առանցքային տարրը միգրանտ խմբերի և պետության միջև ուժեղ հանրային-մասնավոր համագործակցությունն է, ինչպես նաև այնպիսի այլ ներդրողների համաֆինանսավորում կատարելու հնարավորությունը, ինչպիսիք են «Վեսթերն Յունիոնը» և «Օքսֆամը»: Հաղորդակցության բաց գիծ պահպանելով, միգրանտները միասնականկոլեկտիվ ֆոնդերն օգտագործում են այն նախաձեռնությունների և բարելավումների համար, որոնք կցանկանային տեսնել իրենց հայրենի քաղաքներում, որոնք այնուհետև իրականացվում են տեղական կառավարությունների և իրականացնող գործընկերների կողմից: Կոլեկտիվ ֆոնդի միջոցով նվիրատվություն կատարելու մեջ առկա ռիսկի ապակենտրոնացումը բավմաշահագրգիռ կողմ մոտեցման հետ համադրելով՝ կառավարությունների կողմից վգալի ուշադրություն է գրավել այս մոդելի վրա: Ավելին, ծրագիրը շոշափելի արդյունքներ է տվել տեղական բարելավումների տեսքով, որոնք 2014 թվականի դրությամբ ընդհանուր կազմում են 1.5 միլիարդ մեքսիկական դոլար (Մալոուն և Դըրդեն, 2018թ.):

Օրոսկոն ստորև ներկայացված աղյուսակներում ընդգծում է հայրենի քաղաքի միավորումների միջոցով իրականացվող ծրագրերի որոշ կարևոր տարրեր՝

Սեփականություն	Համապատասխանություն	Կայունություն	Վերարտադրելիություն
Համայնքի անդամները մասնակցում են որոշումների կայացմանը, համայնքի անդամները մասնակցում են իրականացման և համայնքի անդամներն ավարտից հետո ունեն ծրագրի նկատմամբ հսկողություն:	Ծրագիրը բավարարում է հիմնական կարիքները, բավարարվող կարիքները վարգացման առաջնահերթություն են, իսկ իրականացումն տեղի է ունենում միավորմամբ կամ այլ կառույցների հետ համագործակցությամբ:	Ծրագիրը հնարավորություն է տալիս իրագործել նպատակները, բեռ չէ կամ չի առաջացնում հավելյալ ծախսեր և ունի երկար կենսափուլ:	Ծրագրի ռեսուրսները հասանելի են այլ համայնքներում, և այլ համայնքներում առկա է իրականացումը դյուրացնող ինստիտուցիոնալ միջավայր:

Աղբյուր՝ Մ. Օրոսկո, 2005թ.:

Հարկ է նկատել, որ սփյուռքի բարեգործությանը բնորոշ դժվարություններն անշուշտ կիրառվում են ՀՔՄ-ների նկատմամբ, և հայկական համատեքստում գործարկվելու դեպքում վգալի ուղղորդում կպահանջվի արդյունավետ նախաձեռնությունների ուղղությամբ, որոնք պետք է համապատասխանեն ինչպես կառավարության, տեղական, այնպես էլ սփյուռքի առաջնահերթություններին: Սփյուռքահայերի բարեգործական անցյալը պետք է լրջորեն դիտարկվի սփյուռքի կողմից առաջարկվող նախաձեռնություններն ընտրելիս: Ինչպես «Այալայի հիմնադրամի» ֆիլիպինյան դեպքում, մի ԳԳՏ նշում է, որ «Շատ դոնորների դեռևս գոհ են ժամանակավոր ծրագրերից, որոնք կարող են վգացմունքային առումով բավարարել նրանց, սակայն

չեն հանգեցնում մշտական կամ կանոնավոր բարելավման» (Նյուլնդ և այլք, 2010թ., էջ 17): Բացառությամբ ենթակառուցվածքներում, ՓՄՁ-ներում և հանրային վայրերում մի քանի մեծածավալ և կգալի ներդրումների, հայկական մեծ սփյուռքի բարեգործությունը մեծապես տեղավորվում է այս ընդհանրական «ժամանակավոր օգնություն» սահմանման կամ ուրախացնող նախաձեռնությունների շրջանակներում:

Դասերը Հայաստանի համար. Հայկական հայրենի քաղաքի միավորումներն առաջացել են 20-րդ դարում, արևմուտքում, երբ մի խումբ կազմակերպում և գումար էր հավաքում Երկրորդ համաշխարհային պատերազմում կռվող հայ վիրավորներին պարագաներ և փաթեթներ ուղարկելու համար: Այնուամենայնիվ, խմբերի՝ իրենց նոր հայրենիքներին հետագա ինտեգրմանը և սփյուռքի հետագա ալիքների առաջացմանը զուգընթաց, խմբերի այս տեսակները մեծապես հնացած են դարձել: Սա չի նշանակում, որ միգրանտների շրջանում տեղեկություններ և ռեսուրսներ փոխանակելու համար միավորումներ գոյություն չունեն ոչ ֆորմալ ալիքներում, ինչպես օրինակ՝ Ֆեյսբուքի, Վայբերի կամ Վոթսէփի խմբերում, սակայն դրանք լիովին չեն գործարկվել կամ գործի չեն դրվել իրենց վարգացման ամբողջ հնարավորության չափով: Այս ծրագրի գնահատումը ցույց է տալիս, որ իրականացմանը շատ շահագրգիռ կողմերի և խմբերի ներգրավվածությունը հաջողության առանցքային ուղենիշ է, և որ միավորումների աճին և հասունացմանը զուգընթաց մեծանում են ծրագրերի հաջողությունները (Օրոսկո, 2005):

Հաջող ծրագրերի ընդհանուր տարրերը

Վերջապես, ուսումնասիրելով սփյուռքի ներգրավվածության ընդհանուր քաղաքականությունները, մոտեցումները և եղանակները և վերանայելով բազմաթիվ օրինակներ, որոնք կարող են կիրառելի լինել հայկական համատեքստում, համաշխարհային նախաձեռնություններից առկա է անհաշիվ չհամակարգված, կարճ կյանք ունեցող խորհուրդ: Լայնորեն ասած, սփյուռքի նախաձեռնությունները հաջողությամբ են պսակվում, երբ՝

դրանք մշակված են սփյուռքին հատուկ շարժառիթների հիման վրա

«Միգրանտներից շատերին չի անհանգստացնում սփյուռքի կոլեկտիվ ինքնությունը» (Կուլնեցով, 2008թ.): Շահագրգիռ կողմերի կողմից սփյուռքի համար իրականացվող մարքեթինգում կատարվող հաճախ հանդիպող սխալ քայլ է մասնակցության հասնելու համար մեծապես ազգայնական զգացմունքի և հայրենասիրության վրա հիմնվելը: Սփյուռքը, ինչպես մյուս կատարողները, ինքնաշահագրգռված է, և այն նախաձեռնությունները, որոնք շոշափելի օգուտներ են բերում սփյուռքին, ինչպես օրինակ՝ կարիերայի առաջխաղացում, արժեքավոր փորձ, ներդրման վերադարձ, արտոնյալ տոկոսադրույքը կամ ընթացիկ հաշիվը, ամենամեծ կշիռն են կրում: Անշուշտ, առանցքային հաջող ցանցերը, ինչպես օրինակ՝ «Կիվի Գաղթականների Միավորումը» (ԿԳՄ) հավվադեպ է հիմնվում մշակութային կամ ազգայնական հաղորդագրություններ հղելու վրա՝ շեշտելով այն տնտեսական և անհատական հնարավորությունները, որոնք առաջարկվում են նորվելանդացիների համաշխարհային տվյալների շտեմարանին և ցանցին մասնակցությունը (Լարներ, 2007թ., էջ 339):

պետությունը ծառայում է որպես դրական օժանդակող մարմին և նվազեցնում է մուտքի խոչընդոտները

Հաճախ ամենամեծ ազդեցությունը, որ կառավարությունը կարող է ունենալ սփյուռքի նախաձեռնություններում, կառավարչի կամ ինկուբատորի դերն է: «Իռլանդիայի մոտեցումն իր սփյուռքին հարաբերականորեն հաջող է, մասնավորապես բիզնեսի մասով, քանի որ այն կառուցվածքով թեթև և ճկուն է, իր անդամներին տալիս է սեփականություն և ազատություն և վարգացող է՝ առանց կոշտ լինելու» (Անսիեն և այլք, 2009թ.): Անշուշտ, սփյուռքի շատ խոշոր և հայտնի նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ «Birthright Israel»-ը (Թագլիթ) կամ որակավորված մասնագետների վերադարձի ծրագրերը, կիրառում են բազմաշահագրգիռ կողմերի մոտեցումը, որի հիմքում ընկած է կա-

ռավարության աջակցությունը և համագործակցությունը: Այնուամենայնիվ, այնպիսի երկրները, ինչպիսիք են Իռլանդիան, Շոտլանդիան, Չինաստանի Թայվան նահանգը և Յամայկան, մեծապես շահել են պահպանելով հարաբերական չեզոքություն, երբ կառավարությունը ծրագրի նկատմամբ ամբողջական սեփականության փոխարեն ուղղորդում, ֆինանսավորում կամ բյուրոկրատական աջակցություն է տրամադրում: Կարևոր է, որ այդ սփյուռքը նախաձեռնությունների և ներդրումների նկատմամբ «սեփականության իրավունք» ունենա (Յոնեսկու, 2006թ.):

դրանք մշակված են անկանխատեսելի վենչուրների հիման վրա

Որքան էլ շատ դասեր կարող են քաղաքականություն մշակողները քաղել այլ երկրների հաջողություններից, զարգացման մեջ սփյուռքի ներգրավվածության ամենաազդեցիկ պատմություններից որոշներն առաջանում են կառույցներից դուրս: «Ֆաունդեյշն Չիլի»-ի և մի շատ ազդեցիկ սփյուռքի ներկայացուցչի միջև համագործակցությունը մի ԳԳՏ-ի փորձի և անկանխատեսելի միջամտության շնորհիվ գրեթե վերափոխել է ամբողջ գյուղատնտեսական ոլորտը (Կուվնեցով և այլք 2006թ.): Նմանապես, «չինական և կորեական սփյուռքի դերն իրենց համապատասխան երկրների էլեկտրոնիկայի արդյունաբերության զարգացման հարցում ներգրավված կառավարությունների կողմից «պոստ ֆակտո» բացահայտում էր, որն այնուհետև հանգեցրեց կառավարության կողմից հովանավորվող փորձերի՝ մշակելու միջազգային տեխնոլոգիական գործընկերություններ, որոնք օգուտ կքաղեին այդ երկրների և դրանց բարձր հմտություններ ունեցող օֆշորային քաղաքացիների միջև կապերից» (Լարներ 2007թ., էջ 335): Թեև կառավարությունները պետք է միջավայր, հաղորդակցության կապուղիներ և հարթակներ տրամադրեն ներգրավվածության համար (ինչպես օրինակ՝ սփյուռքի պորտալներ, համաժողովներ) և կարող են սահմանել այն առաջնահերթ բնագավառները, որտեղ սփյուռքը կարող է բաց լրացնել, սփյուռքի հաջող ցանցերի և նախաձեռնությունների մեծամասնությունն առաջանում է ինքնաբուխ՝ առանց կառավարության միջամտության:

Այնուամենայնիվ, քաղաքականությունը կարող է խրախուսել և դյուրացնել սփյուռքի ծրագրերը: Առաջացող ցանցերը սահմանելով և դրանց օգնության ձեռք մեկնելով, կառավարությունները կարող են տրամադրել ուղղորդում և ռեսուրսներ՝ դրանց մասշտաբի մեծացման հարցում աջակցելու համար:

Եզրակացություն

Չկա սփյուռքի ներգրավվածության նկատմամբ ստանդարտացված մոտեցում, ոչ էլ սփյուռքը վստահելի լուծում է պետության բոլոր վարգացման կարիքների համար: Հայաստանի դեպքը ցույց է տալիս, որ գոյություն ունի հսկայական ներուժ, եթե այն օգտագործվի թիրախային մտահղացումների համար՝ հաշվի առնելով սփյուռքի՝ որպես ներդրողների և նպաստ ունեցողների մտահոգությունները: Հայաստանում սփյուռքի ներգրավվածության երկար կորը սկսել է փոխել ուղղությունը և արդեն տեղափոխվել է դեպի ավելի արդար գործընկերության՝ երկիրն առաջնորդելով դեպի իր արտասահմանյան բնակչության փորձից և ռեսուրսներից ավելի լայնածավալ շահույթ ստանալուն: Ընդհանուր առմամբ, կառավարությունը պետք է կազմի ճանապարհային քարտեզ, որը կներառի այն ոլորտները և բնագավառները, որտեղ պահանջվում է սփյուռքի ներդրում, ինչպես այն կարող է ստեղծել փոխադարձ շահավետ և շահութաբեր գործընկերություն և աշխատել այդ նախաձեռնությունները «թեթև ձեռքով» դյուրացնելու, ինկուբացնելու և խրախուսելու ուղղությամբ: Վերոնշյալ այլ պետությունների հաջողություններին (և անհաջողություններին) հետևելը մատնանշում է ուղղորդում հայկական սփյուռքի ներգրավվածության ռազմավարություն իրականացնելու հարցում:

Աղբյուրներ

Abhishek P., A. Aggarwal, R. Devane, and Y. Kuznetsov.
2006. “The Indian Diaspora: A Unique Case?” in Y. Kuznetsov (ed.) Diaspora Networks and the International Migration of Skills: how countries can draw on their talent abroad, Herndon: World Bank Publications.

Aguinas, D.R. and K. Newland. 2012.
Developing a Road Map for Engaging Diasporas in Development:
A handbook for policymakers and practitioners in home and host countries,
International Organization for Migration, Geneva.
https://publications.iom.int/books/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policymakers-and-practitioners

Ancien D., Boyle M. and Kitchin R. 2009.
Exploring diaspora strategies: An international comparison, Workshop Report,
National University of Ireland, Maynooth.

Biao, X., 2005.
“Promoting Knowledge Exchange through Diaspora Networks
(The Case of People’s Republic of China)” Compas, Oxford.
www.compas.ox.ac.uk/wp-content/uploads/ER-2005-Knowledge_Exchange_Diaspora_China_ADB.pdf.

Délano, A. and A. Gamlen. 2014.
“Comparing and theorizing state-diaspora relations” Political Geography (41).

Ionesco, D., 2006.
“Engaging Diasporas as Development Partners for Home and Destination Countries:
Challenges for Policymakers” International Organization for Migration, Geneva.

Gamlen, A., 2006.
“Diaspora Engagement Policies: What are they, and what kinds of states use them?”
Centre on Migration, Policy and Society, WP 32, Oxford.

Garchitorena, V., 2007.
“Diaspora Philanthropy: The Philippine Experience,” Ayala Foundation, Cambridge.
www.cbd.int/financial/charity/philippines-diaspora.pdf.

Gillespie, K., L.Riddle, E.Sayre and D. Sturges. 1999.
“Diaspora Interest in Homeland Investment”, *Journal International Business Studies*,
Vol.30, 623–634.

Kuznetsov, Y., 2006.
"Leveraging Diasporas of Talent: Towards a New Policy Agenda",
in Y. Kuznetsov (ed.) Diaspora Networks and the International Migration of Skills: how countries can draw on their talent abroad, Herndon: World Bank Publications.

Kuznetsov, Y., 2008.
"Mobilizing intellectual capital of diasporas: from first movers to a virtuous cycle."
World Bank Institute, Washington, D.C.

Larner, W., 2007.
"Expatriate experts and globalizing governmentalities: the New Zealand diaspora strategy" Transactions of the Institute of British Geographers, New Series, Vol. 32-(3), www.jstor.org/stable/4626253.

Malone, A. and T. E. Durden. 2018.
"Who Drives Diaspora Development?: Replication of Mexico's 3x1 Program in Yucatan" Journal of Latin American Geography, Vol. 17 (1), 139—165.

Minoian, A. L.V. Freinkman and L. Freinkman. 2006.
"Armenia: What Drives First Movers and How Can Their Efforts Be Scaled Up?"
In Diaspora Networks and the International Migration of Skills: how countries can draw on their talent abroad, Herndon: World Bank Publications.

Naujoks, D., 2013.
Migration, Citizenship, and Development: Diasporic Membership
Policies and Overseas Indians in the United States. Oxford: Oxford University Press.

Newland, K., 2010.
Diasporas: New Partners in Global Development Policy.
Migration Policy Institute: Washington, D.C.

Newland, K, A. Terrazas and R. Munster (2010), "Diaspora Philanthropy:
Private Giving and Public Policy," Migration Policy Institute.

Orozco, M. and R. Rouse. 2007.
"Migrant Hometown Associations and Opportunities for Development:
A Global Perspective," Migration Information Source,
www.migrationpolicy.org/article/migrant-hometown-associations-and-opportunities-development-global-perspective.

Orozco, M., 2005.
"Hometown Associatoins and Development: Ownership, Correspondence, Sustainability and Replicability" in New Patterns for Mexico: Observations on Remittances, Philanthropic Giving, and Equitable Development, ed.
B. Merz. Cambridge: Harvard University Press.

Saxenian, A., 2000.
A silicon valley's new immigrant entrepreneurs. San Diego: University of California.

IOM
UN MIGRATION